

Ներգաղթյալ ընտանիքների պաշտպանություն, մեր ապագայի բարելավում

Ինչպես խոսել պետական խնամակալության մասին ներգաղթյալների և նրանց ընտանիքների հետ

Այս ռեզյումեն ամփոփում է Ներգաղթյալ ընտանիքների պաշտպանության արշավի կարևորագույն հաղորդագրությունները և առաջարկվող հարցերը, որոնք պետք է քննարկել ներգաղթյալ համայնքների հետ հաղորդակցվելիս:

Խնդրում ենք օգտագործել հիմնական հաղորդագրությունը կարևոր հաղորդագրություններից որևէ մեկի կամ դրանց բոլորի հետ միասին: Այս հաղորդագրություններին հաջորդում է քննարկվող հարցերի մի ավելի ընդգրկուն շարք՝ համապատասխան կարևորագույն հաղորդագրություններին:

Գործընկերները նույնպես կարող են հաղորդագրություններից յուրաքանչյուրը, այդ թվում՝ հիմնական հաղորդագրության ճշգրիտ ձևակերպումը ազատորեն համապատասխանեցնել իրենց կազմակերպության հաղորդակցման և համայնքի ներգրավման ռազմավարությանը: Օրինակ, քննարկվող հարցերում աղքատության և քաղցի ավելացումը նշվում են որպես պետական խնամակալության քաղաքականության փոփոխման վերաբերյալ Թրամփի վարչակազմին ներկայացված առաջարկի հավանական հետևանքներ, սակայն, էթե ձեր կազմակերպությունը զբաղվում է առողջության հետ կապված հարցերով, մենք խրախուսում ենք ձեզ ավելացնել, որ «առողջապահական կարիքները չեն բավարարվում», կամ խնդրի վերաբերյալ ձեր կազմակերպության նախընտրած ձևակերպումը:

Ավելի երկար ռեզյումեն, որը քննարկում է պետական խնամակալությունը, նույնպես հասանելի է որպես ռեսուրս. <http://www.nilc.org/exec-orders-and-access-to-public-programs/>:

Կարևորագույն հաղորդագրություններ

Հիմնական հաղորդագրություն

- Դուք մենակ չեք և դեռևս ժամանակ կա դիմադրելու համար:

Այլ կարևորագույն հաղորդագրություններ

- ԱՄՆ տարածքում պետական խնամակալության հետ կապված որոշումների քաղաքականությունը դեռ չի փոխվել:
- Առաջարկվող կանոնը դեռևս միայն նախագիծ է: Երբ այն հրապարակվի, դաշնային գործակալությունը պետք է ընդունի դրան ուղղված մեկնաբանությունները և պատասխանի դրանց: Այն չի կիրառվի, քանի դեռ վերջնական չի ձևակերպվել, ինչը լրացուցիչ ժամանակ կպահանջի:
- Ոչ բոլոր ներգաղթյալներն են ենթակա պետական խնամակալության թեստին:
- Թեստը դիտարկում է անձի բոլոր հանգամանքները՝ հակակշռելով դրական գործոնները բացասականներին:
- Եթե առաջարկվող կանոնը վերջնական դառնա, մինչև այդ կիրառված ոչ դրամական արտոնությունները (բացի երկարաժամկետ խնամքից) հաշվի չեն առնվի: Արտոնություններից հիմա օգտվելը կօգնի ձեզ կամ ձեր ընտանիքի անդամներին ապագայում լինել ավելի առողջ, ավելի ուժեղ և աշխատունակ:
- Դաշնային և նահանգային օրենքները պաշտպանում են այն մարդկանց գաղտնիությունը, ովքեր դիմում են առողջապահական ապահովագրության, սննդային օգնության, տնտեսական աջակցության կամ այլ պետական արտոնությունների համար կամ օգտվում դրանցից:
- Դիմեք օգնության, որպեսզի որոշեք, թե որն է լավագույն տարբերակը ձեր ընտանիքի համար և, էթե կարող եք, ձեր իրավիճակի վերաբերյալ խորհրդակցեք ներգաղթի հարցերով զբաղող հավատարմատարի կամ Ներգաղթի հետ կապված հարցերի բողոքարկման խորհրդի լիազորված ներկայացուցչի հետ:

Քննարկվող հարցեր

Պուք մենակ չեք: Թրամփի վարչակազմի՝ պետական խնամակալության վերաբերյալ կանոնի նախագիծը կստիպի ներգաղթյալ ընտանիքներին ընտրություն կատարել իրենց անհրաժեշտ բաների և իրենց սիրած մարդկանց միջև: Արդյունքում ի հայտ եկած աղքատությունը, քաղցը և այլ սոցիալական խնդիրները կազդեն միլիոնավոր մարդկանց վրա՝ սա դարձնելով սպառնալիք ամբողջ երկրի համար:

Պեռևս ժամանակ կա դիմադրելու համար: Ամբողջ երկրով մեկ մարդիկ ոտքի են կանգնում Թրամփի դեմ և պայքարում, որպեսզի պետական խնամակալության քաղաքականությունը փոխելու այս նվաստացնող առաջարկը չընդունվի: Առողջապահության, սննդի, տնտեսական հնարավորությունների հարցերով զբաղվող առաջատար ձայները միավորվել են պետական խնամակալության քաղաքականության առաջարկված փորձերի դեմ: Նրանք ահազանգ են հնչեցնում լրատվամիջոցներում՝ ներգրավելով քաղաքականություն մշակողներին և այնպիսի համախմբված համայնքներին, ինչպիսին ձերն է այս չարաշահող քաղաքականության դեմ պայքարելու համար: Միացե՛ք մեզ՝ տարածելով ձեր պատմությունը, տեղադրելով մեկնաբանություններ պետական խնամակալության կանոնի հրապարակվելուց հետո և տեղեկացնելով ձեր օրենսդիրներին, որ այս հարցը կարևոր է ձեզ համար:

ԱՄՆ տարածքում պետական խնամակալության որոշմանը վերաբերող կանոնները դեռ չեն փոխվել: Մինչ ԱՄՆ հյուպատոսություններն արտասահմանում սկսել են ավելի լայնորեն կիրառել պետական խնամակալության թեստերը, այս փոփոխությունները վերաբերում են միայն այն անձանց, ովքեր ձգտում են արտասահմանից տեղափոխվել ԱՄՆ կամ ովքեր պետք է գնան արտասահման իրենց դիմումների ընթացակարգը սկսելու համար: ԱՄՆ քաղաքացիության և Ներգաղթի ծառայությունների կողմից (USCIS) մշակված կանաչ քարտերի դիմումների համար պետական խնամակալության կանոնները դեռ չեն փոխվել:

Այս կանոնը դեռևս միայն նախագծի ձև ունի: Այն չի կարող կիրառվել, մինչև վերջնական դառնալը, ինչը լրացուցիչ ժամանակ կպահանջի: Թրամփի վարչակազմը դեռևս փաստացիորեն չի առաջարկել այս կանոնը: Մենք տեսել ենք միայն անավարտ նախագծերը: Եթե վարչակազմը հրապարակի կանոնը, օրենքը մեզ բոլորիս հնարավորություն է տալիս հանդես գալ դրա դեմ, մինչև կառավարությունը կընդունի կանոնը: Կանոնի վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելուց հետո դիտարկման գործընթացը կարող է տևել ամիսներ: Փաստացիորեն, որոշ կանոններ երբեք էլ չեն ընդունվում: Եթե կանոնն ընդունվի, այն կարող է մի քանի շաբաթ կամ ամիս ուժի մեջ չլինել, մինչև չհրապարակվի վերջնական տարբերակը:

Որոշ ներգաղթյալներ օրենքով ազատված են պետական խնամակալության թեստից: Ազատված ներգաղթյալների թվում են փախստականները, ապաստան հայցողները, թրաֆիքինգի, ընտանեկան բռնության և այլ ծանր հանցագործությունների ենթարկվածները (T կամ U վիզայի համար դիմողները/ունեցողները), VAWA հայցվորները, հատուկ անչափահաս ներգաղթյալները, պայմանական վաղաժամկետ ազատված որոշ մարդիկ և ԱՄՆ-ի քաղաքացիության համար դիմող կանաչ քարտ ունեցողները: Անգամ եթե նախագծի կանոնադրությունն ընդունվի, այս խմբերը չեն ենթարկվի պետական խնամակալության թեստի:

Պետական խնամակալության թեստը դիտարկում է դրական և բացասական գործոնները

Ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնյաները պետք է դիտարկեն ձեր բոլոր հանգամանքները որոշելու համար, թե ինչքանով է հավանական, որ դուք ապագայում կդառնաք պետական խնամակալության տակ գտնվող անձ: Մա ներառում է ձեր տարիքը, առողջական վիճակը, եկամուտը, ունեցվածքը, ռեսուրսները, կրթությունը/հմտությունները, ընտանիքի անդամները, որոնց դուք պետք է աջակցեք և ընտանիքի անդամները, որոնք կաջակցեն ձեզ: Նրանք կարող են նաև հաշվի առնել, թե արդյոք որևէ հովանավոր վկայագիր (կամ պայմանագիր) է ստորագրել խոստանալով ձեզ աջակցել: Դրական գործոնները կարող են հակակշռել ցանկացած բացասական գործոնի:

Եթե կանոնն ընդունվի, դուք գործելու ժամանակ կունենաք մինչև կանոնը ուժի մեջ մտնի: Ըստ առաջարկների ընթացիկ նախագծի, արտոնությունները, որոնք նախկինում ներառված չէին պետական խնամակալության սահմանման մեջ (ինչպես օրինակ Medicaid-ը և SNAP-ը՝ Լրացուցիչ սննդի օժանդակման ծրագիրը) հաշվի կառնվեն միայն եթե այս արտոնությունները ստացվեն վերջնական կանոնի հրապարակումից 60 օր անց: Ներկայումս արտոնություններից օգտվելը կարող է օգնել ձեզ կամ ձեր ընտանիքի անդամներին ապագայում դառնալ ավելի առողջ, ավելի ուժեղ և աշխատունակ: Ընտանիքները պետք է անհատական որոշում կայացնեն՝ հիմնվելով իրենց առանձնահատուկ հանգամանքների վրա:

Դաշնային և նահանգային օրենքները պաշտպանում են այն մարդկանց գաղնտիությունը, ովքեր դիմում են առողջապահական ապահովագրություն կամ սննդային օգնություն, տնտեսական օժանդակություն կամ

պետական այլ ծրագրերից օգնություն ստանալու համար: Պետական ծրագրերի դիմումները չպետք է պահանջեն տեղեկություններ ընտանիքի այն անդամների ներգաղթի կարգավիճակի մասն, ովքեր չեն դիմում: Արտոնությունների հարցերով զբաղվող գործակալությունները կարող են կիսել տեղեկությունը այլ պետական գործակալությունների հետ միայն իրենց ծրագրերն իրականացնելու համար, սահմանափակ թվով բացառություններով: Դուք կարող եք տրամադրել միայն անհրաժեշտ տեղեկատվությունը և չպետք է սխալ մեկնաբանեք որևէ բան պետական արտոնությունների դիմումներ լրացնելիս կամ որևէ պետական գործակալության հետ գործ ունենալիս:

Դիմեք օգնության, որպեսզի որոշեք, թե որն է լավագույն տարբերակը ձեր ընտանիքի համար և, եթե կարող եք, ձեր իրավիճակի վերաբերյալ խորհրդակցեք ներգաղթի հարցերով զբաղող հավատարմատարի կամ Ներգաղթի հետ կապված հարցերի բողոքարկման խորհրդի լիազորված ներկայացուցչի հետ:

Փաստաբանները և առողջապահական ու սոցիալական ծառայություններ տրամադրողները ամբողջ երկրով մեկ վերահսկում են պետական խնամակալության կանոնը: Շատ տեղական առաջնորդներ կարող են օգնել անհանգստացած ընտանիքներին ներգաղթի վերաբերյալ անվճար կամ ցածր գնով օգնություն ստանալու գործում: Դուք կարող եք օգտագործել այս առցանց ուղեցույց, որպեսզի հայտնաբերեք շահույթ չհետապնդող տեղական կազմակերպություններ, որոնք կտրամադրեն իրավաբանական օգնություն և խորհրդատվություն. <https://www.immigrationlawhelp.org/>: